

դանա՞ շոգենաւը, որ բեռնաւորված էր պա-
շարներով եւ պոստական զօրքերի համար՝ Նիւ-
Չժուանում արգելված է մարապին պաշտո-
նեաների կողմից այն առարկութեամբ, թէ
չինական չէ զօրքութիւնը կը խախտվի, եթէ շո-
գենաւը գնայ իր յանձնարարութեամբ: Գործը
տեղափոխված է Պէկին Հարտի վճռահատու-
թեան, իսկ մինչև այն շոգենաւը քննու է այս-
տեղ: Ենթադրու է, որ «Նիւտեպանդանտի»
վրա կայ տան միլիոն փող, որ նշանակված է
Կուրսիի զօրքի վարձատրութեան համար: Մի
հակապանախա եկաւ արագապէս Դալիից
այստեղ և տարաւ փողը: Վտանգի անձանց
կարծիքով եւ պոստական ակնանաւ որոնում էր
նուս օֆիցէրներ, որոնք իրը թէ փորձում
էն եղել գնալ շոնկայով Պորտ-Արտուրը, և բըռ-
նեց նրանց:—Չինացիներ, որոնք զուրա են ե-
կել Պորտ-Արտուրից օգոստոսի 13-ին ասում
են, թէ Ն 5 մարտկոցը ոչ ունենի և ոչ
եւ պոստացիների ձեռքին է: Տունգարդան
մարտկոցը խորտակված է եւ պոստացիներից
այն թնդանութիւնով, որ նրանք դրած են ե-
ղել հարեան բլրի վրա: Չինացիները հաստա-
տում են, որ ունենեղը գրաւել են Իտանը:
ՏՕԿԻՐ, 19 օգոստոսի: (Բէյտէյ): Լեռնանի
մօտ շարունակվում է պատերազմը, բայց դեռ
առանց հետեանքի: Եւ պոստական պաշտօնական
հեռագիրը հաղորդում է, որ պատերազմող
կողմերից ոչ մէկը չէ հասել հետեանքի:
ՄԻՄԼԱ: (Բէյտէյ): Անգլիական միսսիոն կը
թողնէ Լիսսան սեպտեմբերի 2-ին:
Կ. ՊՈԼԻՍ: (Կորնեպ. Բիւրօ): Բիթլիսի վա-
րի հաղորդագրութեան համաձայն հայկական
պարագլուխ Անդրանիկը ուղարկել է Մուշի
անգլիական հիւպատոսին մի նամակ, որի մէջ
յայտնում է, թէ նա շուտով կը ձեռնարկէ ե-
ռանդուն գործողութիւններ: Անգլիական շըր-
ջաններում չեն կարծում, որ իսկապէս նամակ
է ուղարկված: Վանի վալի հաղորդում է, թէ
Վանի վիլայէթում երկացիլ է նոր հայկական
արշաւախումբ:

ՍՍԼՈՒԿԻ: (Վօլգի գործ.): Բօլշարական
60 մարդուց բաղկացած չէտան սպանեց Սա-
լօնիկի մօտ գտնված գիւղում մի քանի գիւ-
ղացիների. երկրորդ չէտան նոյն ժամանակը
ներս խուճեց մէկ ուրիշ գիւղ:

ՊԵՏԵՐՔՈՒԹԻՐ: Գինեւրալ-լէյտենանտ Սա-
խարովի հեռագիրը 1904 թիւ օգոստոսի 18-ից.
«Ներկայ թիւն Կուրսիի զօրամասերն անցան
Տայգիի գետի աջ ափը Սախան և Կանկվանս-
տուն վայրերը, ուր գետը պոստ է անում:
Սառնառան հինգ ժամին մեր խուզարկունե-
րը պարզեցին, որ փառված անցել է դիվիզիոն
նորով: Եւ պոստացիները առաջ շարժվեցին եր-
կու ուղղութեամբ՝ արևմտեան և եանտայեան
հանքերի ուղղութեամբ: Գինան անցնող զօրա-
մասերը կազմեցին ծածկոց, որ թագնում էր
մնացած զօրամասերի գետով անցնելը: Մեր
առաջապահ զիւրքի վրա օգոստոսի 18-ին ասա-
տիկ լարված կռիւ էր շարունակվում երեկո-
յան 8 ժամից մինչև գիշերվայ 12 ժամը,
երբ կատարեալ լուսթիւն տրեց: Ինչպէս և
երէկվայ թիւն, կռիւը չեղ համար կատարե-
լապէս այն վայրէջան ունեցաւ, որովհետև
մենք առանց բացառութեան պահպանեցինք
բոլոր մեր առաջապահ զիւրքերը: Առանձնա-
պէս յամառ կռիւ էր մղվում գինեւրալ-մայօր
Կոնդրատովի զիւրքի վրայ: Եւ պոստացիներն
արձակեցին անապին բանակութեամբ արտի-
լէրական ուժեր: Ծածկված ամբողջ օրը
շարունակեցին հարուածներ տակ մնալով մեր
զօրքերը հազուապէս յամառութեամբ պաշտ-
պանում էին իրանց յանձնված գիւրքերը: Նա-
խապատրաստելով յարձակումը արտիլէրիա-
կան կրակով, եւ պոստացիները մի քանի ան-
գամ գրոհ էին տալիս մեր զիւրքերի վրա:
Մեր ամենատառապահ ամբուրթիւններից մի
քանիսը, յամառ պաշտպանութիւնից յետոյ,
անցնում էին եւ պոստացիների ձեռքը, բայց
իւրաքանչիւր անգամ մենք նորից տրեւում
էինք նրանց սուրինների հարուածներով, որի
թամանակ եւ պոստացիները թողնում էին բազ-
մաթիւ սպանվածներ: Սուրիններով ընդհարու-
մից յետոյ զիւրքերի մի քանի հողաբաժինների
առջև զօրքերը կարողացան փոքի Գաօլեա-
նում մեծ թուով փոսեր. տեղ տեղ այդ փոսերը
լցված էին մինչև բերանը եւ պոստական դիակ-
ներով: Եւ պոստացիների կորուստները պէտք է
անապին լինեն, բայց մեր կորուստներն էլ,
որոնք դեռ ի յայտ չեն բերված մինչև անգամ
մօտաւորապէս, նոյնպէս նշանաւոր են: Վերա-
ւորված է գինեւրալ-մայօր Մորօզովից: Թեթև
կերպով վերաւորված, բայց մնաց կազմի մէջ,
գինեւրալ-լէյտենանտ բարձր Շտակէլբէրգ: Մեր
ձեռքն անցաւ եւ պոստական գէնքի նշանաւոր
բանակութիւնը:

Գինեւրալ-լէյտենանտ Սախարովի հեռագիրը
գլխաւոր շտաբին 1904 թիւ օգոստոսի 19-ից.
«Նոյն օգոստոսի 19-ի գիշերը անցաւ հանգիստ.
մինչև առաւօտեան 9 ժամը ոչ թշնամու, ոչ
էլ մեր կողմից հրաձգութիւն չը կար: Ստաց-
ված տեղեկութիւններն համեմատ, Կուրսիի
պոստոնեան կամուրջ է դնում գետն անցնելու
տեղի մօտ:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Ա. Տ. Մ. Ն. Ա. Ռ. Յ. Յ.
Ա. Ա. ՄԱՅՏԱՐԱՐԵԱՆՑ
վերադարձաւ և վերսկսեց ընդունելութիւնը:
Վերամիշնովսկայ փ. № 22. 1—5

Դ Պ Ր Ո Ց
ԿԱՏ. ԼԻՍԻՑԵՆԻ
Երկու սեռի մանուկների համար: Ընդունելու-
թիւնը՝ սեպտեմբերի 1-ից, ուսման սկիզբը
սեպտեմբերի 6-ից: Բեհրութեան փող. սեփ.
տ. 29. 21, 26, 29, 31, ս. 1, 3 1—6

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՋ, ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
և ՊԱՆՄԻՐ
Ս. ՊԵՏՐՈՍԵՆԻ
(Բազու, Գուբերնիայա փող. տուն եղբ. Կրասնի-
կանների)

Մ. պարտէջ. երեխաները ընդունվում են 4—6
տարեկան հասակից:
Ուսումնաբանում երեխաները պատրաստ-
վում են թէ օրիւրաց և թէ տղայից գիմնա-
զիաների և առարկական դպրոցի համար:
Ընդունելութիւնը օգոստոսի 25-ից, ուսումը
սեպտեմբերի 5-ին: ո. չ. 1—10

540 ԴԵՍԵՍԻՆ ԸՆՏԱՐ
Դուշէթի գաւառում Բուսաշաուրի գիւղում:
Որոնում են մի դրամատէր շահագործելու շի-
նութեան համար փայտ (չինար, կաղամախ,
կաղնի, անփուտ) կէտը կարելի է տալ կապա-
լով կամ ծախել և կամ փոխանակել թիֆլի-
սում մի տան հետ: Անտառի ճանապարհը գը-
նում է ռազմավարական ճանապարհով՝ Արագ-
վայի նոր կամուրջով: Մցիւթից 20 վերստի
վրա է Պայմանների մասին գիմել նամակով:
Դուշէթ, Захарію Семеновичу Гедеванову.
(օ. 20, ս. 5, 20) 1—3

Պահանջեցեք ամեն տեղ «ՕՐՈՖԻՆ»:
Միայն Միխաիլ Լեբեդովի
«ЭТИКЕТЪ УТВЕРЖДЕНЪ ПРАВ.» մակագրութիւնով:



ՎԱՍԻՎ ԱՌԻ ԵՒ ՍՏԵՓԱՆ
ՍՄԲԱՏԵԱՆՑՆԵՐԻ
ուսումնաբաններում աւանդվում են՝ կրօն
(հայոց լեզուով), ուսուցիչ լեզու, թուրքաւո-
թիւն, հայոց լեզու և գեղագրութիւն և տար-
վայ ընթացքում պատրաստվում են քննութեան
երեխաներ զանազան միջնակարգ դպրոցների
և Լադարեան ձեմարանի համար:
Ուսումնի սկսվում է օգոստոսի 10-ից: Բօս-
տով Դ/վ, Տուրքենիսկայա փողոց, տուն եղբ.
Ունանտիների, № 4. (ա.օ) 13—25

Ուրբաթ օրը, օգոստոսի 20-ին, երեկոյան
ժամը 8 1/2-ին
Գ Ր Զ Ե Ր Վ Յ Ի Ն Ս Մ Ս Ր Ն Ս
(Վորոնցովսկայա պերեուկով տուն Միլիբովի)
Բժիշկ Աղասարեան կը կարդայ
ԽՕԼԵԱՐՅԻ ՄԱՍԻՆ
Հայերէն լեզուով

Պանսիօն եւ Ռաւմարան
Վ Ի Լ Լ Ի Ա Մ Ս Ի
Ընդունվում են գիշերօթիկ և երթեկ երեխա-
ներ պետական կրթական հիմնարկութիւն-
ների համար պատրաստելու. առանձնապէս՝
—Փրանսիայի և գերմանիայի լեզուներից:
Александрополь, рядомъ съ городскимъ са-
домъ. (Կ. 6. 2.) 5—10

Հ Ե Ր Մ Է Ս
Տ Պ Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն
Տ Պ Ա Ր Ա Ն Ը
Տեղափոխվել է իւր հին բնակարանից—(Միքայէլեան փող. № 81) նոր շինութիւնը՝
Մաղաքեան փող. № 15 Ալեքսանդրեան այգու հանգէս
Եւ կապեր հաստատելով եւրօպական նշանաւոր ֆիրմաների հետ, շարունակաբար ստա-
նում է արտասահմանից տպարանական տեխնիքայի նորութիւններ, —(թղթեր, ներկեր,
զարդեր և այլն) որոնք և հնարաւորութիւն են տալիս չափաւոր գներով
ՄԱՔՈՒՐ ԵՒ ԶԲԵՂ ՏՊԱԳՐԵԼՈՒ
Ամեն տեսակ գրքեր, գունատիպ պատկերներ, հաշիւներ, բանկներ, տոմ-
սեր և այլն:
Օտար քաղաքներից դիմել՝ Тифлисъ, типография „Гермесъ“. արտասահմանից՝
Tiflis Imprimerie „Hermes“. 4—10

Ս. ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ
լուսատպարանը ընդունում է
ՅԻՆԿԻ ԿԼԻՇԵՆԵՐԻ
Պատկերներ ձեռնարկ պայմաններով
Նոյն տեղից կարելի է ստանալ հայ
գործիչների, աւերակների, տիպերի և
տեսարանների լուսատպ ԲՍՑ ՆԱ-
ՄԱՆԵՐ. հատը 5 կօպ. 10-ը 40 կ.,
100-ը 3 ռ. իսկ աւելին զիջւումով. ա-
պառիկ չի ուղարկվում: Դիմել. Фото-
цинкография С. Согомоняна. Тифлисъ.
(ո. չ.) 5—10

Լ ո յ ա տ ե ս ա լ
Ա. Ա. ՀԱՐՈՆԵԱՆԻ
ԱՐԱՋԸ
(Պատմութեան ժողովածու)
Գիճճ Ե 80 կօպ.
Դիմել «Գուտտնիք» և «Կենտրոնական»
գրավաճառատնոցներին և հեղինակին՝ Тифлисъ
Редакция „Мурчъ“. (ո. չ.) 9—10
„ՊՈՆՏՈՍ“
Գրախառնութեան, Անապայում, գնում և վա-
ճառում են ամեն տեսակ գրքեր և պատկերներ:
Դիմել՝ Анапа, «Понтосъ», М. Швуду. 2—4

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Լիբանտովսկայա փողոց, № 9)
Ցանկացողները ունենալ իրանց առարկական գործերի համար ուսման ընթացքը աւար-
տած աշակերտների և աշակերտուհիների, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մա-
նուէլեանից ինչ: Աւարտողները ստացել են մասնագիտական առարկական կրթութիւն, Կով-
կասի ուսումնաբանական շրջանի հոգաբարձուի հաստատած ծրագրի համեմատ, և ունեն օրի-
նաւոր ատտեստատներ:
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ
Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձեռնապէս և կուրսեր հիմնողի բնա-
կարանում: Օտարաքաղաքացիները դիմում են՝ ТИФЛИСЪ, учредителю коммерческихъ
курсовъ С. П. Мануэляну. (ո) 9—12

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԼԽԱՌՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
Ընկերութեան ԳՐԱՄՄՈՓՈՆ Ռուսաստանում
Թիֆլիս, Գոլովինսկի պրօպէկտ, Արեւմտեան տուն № 7
Հասցէն հեռագրով Թիֆլիս
ԳՐԱՄՄՈՓՈՆՈՒՄ
Հեռախօս № 69.
ՇԱՏ ՏԵՍԱԿ՝ ամենա-
կատարելագործված սա-
լօնական և կօնցիւրտային
գրամօֆօններ:



Մեծ բանակութեամբ՝ անշուշտ պատասխաններ յայտնի և նշանաւոր երգիչների, ինչպէս
են.—Ռուսաց, վրաց, հայոց, քրդական, պարսկական, ճանկական, լեհական, Ֆրան-
սիական, անգլիական, իսպանական, գերմանական և ուրիշները:
ՊԼԱՍՏԻԿԱՆԵՐԸ ԸՆՏՐԵԼԻՍ Խնդրում ենք ուղարկութիւն դարձնէք մեր ֆարքի-
կայի դրօշմին «Դ Ր Ո Ղ Կ Ր Ե Շ Տ Ա Կ» առանց մեր դրօշմի ընդունել՝ ինչպէս
կեղծված:
Պ ա հ ե ս տ ու է կ ա յ արհեստանոց, որտեղ հարկաւոր եղած ժամանակ կարելի
է նորոգել փչացած ապարատները: Գրամաֆօնի ուղիղ բանելու համար տրվում է ե-
րաշխաւորական թերթ 3 տարի ժամանակով:
Ուղարկելիք ապրանքների արկղը և այլ ծախս գնողների հաշիւին:
ՈՒՂԱԿԵԼԸ ապարատների երկաթուղու բոլոր կայարանները, եւրօպական Ռուսաս-
տանի սահմաններում (ամառը ի հաշիւ առած ջրային ճանապարհների նաւահանգիստ-
ները) կատարվում է պահեստի հաշիւին:
Պատով ուղարկված ապրանքների ծախսը, պահեստը ընդունում է իրան հաշիւին կէսը:
Ա ճ ա ծ պ լ ա ս տ ի ն կ ա ն է ը միայն մեր բաց թողած դրօշմով «Գրող-հրատակ»
յետ է ընդունվում ներքոյ յիշեալ գներով:
Փոքր սովորական } հատը — 50 կօպ. Մեծ սովորական } հատը 1 ո. 00 կօպ.
» էկստրայ } » էկստրայ } » 1 » — »
Դիզանտ սովորական } հատը 1 ո. 30 կօպ. Տամանիօ } 1 » — »
» էկստրայ }
Գիրակի օրերը խառնութիւն փակ է. հասարակ օրերը բաց 8 1/2 առաւ. մինչև ժամ
9-ը երեկոյան:
Պահանջեցեք պահեւորապէս պրօպէկտները:
Դուրսով գնողներին ուղարկվում է Օպէօլի պրօպէկտներն պահանջելու
պէս:—Պահանջեցեք լիակատար լիբրետտօ գրամօֆօնի համար, գինը 1 ռ. 50 կ.: 46—50